



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

09.10.2020թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**  
**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**  
**թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/96**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի  
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ նախագահի աշխատակազմ  
Բողոք բերող՝ «Սօս Սիսթեմս» ՍՊԸ  
Երրորդ անձ՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝  
ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Հ. Խաչատրյանի,  
«Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Ծատուրյանի, ներկայացուցիչներ՝ Ա.  
Գասպարյանի, Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի  
«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալոյանի, ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝  
«ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցում, կրակմարիչներ, հրդեհի  
հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ  
քննող անձ)՝ քննության առնելով «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն)

կողմից 24.08.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Ձ Ե Ց

### **1. Գործի նախապատմությունը**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ծանաչելու մասին որոշումը,

- ընդունել «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշում:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 24.08.2020թ.-ին: 25.08.2020թ.-ին [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲԲԱ-ՆԳ-2020/80 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲԲԱ-ՆԳ-2020/80 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/97 համարի ծածկագիրը:

22.09.2020թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.09.2020թ.-ին, 01.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 01.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

**2. «Սու Սիսթեմս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ն 24.08.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար՝ կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման եվ հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն:

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 08.07.2020թ. ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը 04.08.2020թ. ԳԲԲԱ-ՆԳ-2020/62 որոշմամբ բավարարել է «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի բողոքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 04.08.2020թ. ԳԲԲԱ-ՆԳ-2020/62 որոշումը գնատող հանձնաժողովը որոշել է՝

- դադարացնել ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 22.06.2020թ.-ի թիվ 2, 25.06.2020թ. թիվ 3, 01.07.2020թ. թիվ 4 և 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների համաձայն ընդունված որոշումները:

- դադարացնել ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի՝ [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում 03.07.2020թ. Հրապարակված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.08.2020թ. (արձանագրության մեջ թյուրիմացաբար նշվել է 18.06.2020թ.) տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել (ճանաչել) «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չտրկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Գտնում ենք, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը և առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին և գնահատող հանձնաժողովը չպետք է

նման պայմաններում բավարար գնահատեր ՍՊԸ-ի ներկայացված հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Ընթացակարգի 1-ին չափաբաժնով Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է Լուսաձայնային ազդարար հասցեական – 37 հապ:

Տվյալ ընթացակարգի 1-ին չափաբաժնի 1.7 կետով հայտ ներկայացրած «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ -ն հայտով տվյալ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալ.

7	Լուսաձայնային ազդարար (հասցեական)	EKO	Acmpa-10 ucn. 3 Acmpa-БПА	EKO	<p>37 հապ - Acmpa-10 ucn. 3 19 հապ - Acmpa-БПА</p> <p>Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ահազանգելու հրդեհի մասին: Ազդարարը հասցեական է և ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն, • ձայնային ազդանշանի ուժգնություն՝ ձայնային ճնշման մակարդակ, ոչ պակաս քան 95 դեցիբել • ընդունիչհսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկառուցված ռելե, որի միջոցով միանում է լուսաձայնային ազդանշանը • հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու ազդարարի հասցեները, • ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ, • հասցեային ռելեի մոդուլ (2 ռելե, 19 հապ - Acmpa-БПА), • և այլն:</p>
---	-----------------------------------	-----	------------------------------	-----	--

Գտնում ենք, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը և առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին (մասնավորապես «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված լուսաձայնային ազդարարը հասցեական չէ), նման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.08.2020թ. [www.gnumner.am](http://www.gnumner.am) համացանցային կայքում հրապարակված «Պայմանագիր կնքելու մասին հայտարարության» համաձայն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն, որի հետ անգործության ավարտից հետո կկնքվի պայմանագիր:

«Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գտնում ենք, որ նաև նման տեխնիկական բնութագրի պայմաններում ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չպետք է ընդուներ որոշում «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ, քանի որ շրկված տեխնիկական բնութագրի պայմաններում այն չէր համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, ուստի «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից, ինչը տվյալ դեպքում չի կատարվել: Գտնում ենք, որ վերոհիշյալ արդյունքում խախտվել է «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և կարգի 42-րդ կետի պահանջները՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պարզաբանելու և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Մասնակիցը 01.09.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

««Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ն ներկայացնում է հետևյալ լրացուցիչ հիմնավորումներով.

Գտնում ենք, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ներկայացված և շրկված տեխնիկական բնութագիրը և առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին և գնահատող հանձնաժողովը չպետք է նման պայմաններում բավարար գնահատեր ՍՊԸ-ի ներկայացված հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, Տեխնիկական պահանջների 1.2 կետով սահմանված է, որ տրագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակը պետք է ունենա միացման առնվազն 2 կապի գիծ, յուրաքանչյուրը առնվազն 3000 մետր թույլապրելի երկարությամբ: «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Астра-А РПА լայնացուցիչի հասցեային կապի գծերի թույլապրելի երկարությունը առավելագույնը 1000 մ է, ինչը չի համապատասխանում հրավերով պահանջված առնվազն 3000 մետր թույլապրելի երկարությանը:

Հրավերի տեխնիկական պահանջի նույն կետում նաև նշված է, որ յուրաքանչյուր հասցեային կապի գծին պետք է հնարավորություն լինի միացնելու առնվազն 250 հասցեային սարք, իսկ տվյալ սարքավորումները թույլատրում են միացնել 250 սարք յուրաքանչյուր կապի գծին, սակայն մեկ լայնացուցիչի 2 կապի գծերին միասին միացված սարքավորումների քանակը չպետք է գերազանցի 250-ը: Հետևաբար մեկ կապի գծին 250 սարք միացնելու դեպքում, երկրորդը անհնար կլինի օգտագործել:

(Աղբյուր–Астра-А РПА-ի տեխնիկական անձնագիր–էջ1–1 Назначение-1.4 РПА обеспечивает возможность выбора режима работы АЛС:-режим «Кольцо АЛС1-АЛС2» (по умолчанию)-подключение до 250 адресных устройств в «кольцо», протяженность кольца АЛС до 1000 м; -режим «Индивидуально АЛС1 и АЛС2»-подключение до 250 адресных устройств в каждой АЛС (но суммарно не более 250), с протяженностью каждой АЛС до 1000 м.)

Հրավերի տեխնիկական պահանջների 1.6 կետով սահմանված է, որ հասցեային լուսաձայնային ազդարարը պետք է լինի հասցեական- անալոգային և ունենա՝

- ընդունիչ հսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկառուցված ռելե
- ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ
- մեխանիկական փորձարկման մեթոդ
- հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները:

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի առաջարկած Астра-10 սոս. 3 լուսաձայնային ազդարարը անալոգային է, հետևաբար չի համապատասխանում վերոնշյալ պահանջներին:

(Աղբյուր– Астра-10 սոս. 3-ի տեխնիկական անձնագիր):

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն առաջարկում է լուծում անալոգային լուսաձայնային ազդարարը միացնել Астра-БПА հասցեական ռելեային մոդուլների միջոցով, սակայն անմիջապես լուսաձայնային ազդարարը մնում է անալոգային և

• չունի ներկառուցված ռելե, որը կկարողանա ղեկավարվի ընդունիչ հսկիչ սարքի միջոցով,

- չունի մեխանիկական փորձարկման մեթոդ
- չունի հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ևս մեկ անգամ փաստում ենք, որ նման տեխնիկական բնութագրի պայմաններում ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չպետք է ընդուներ որոշում «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայրը բավարար գնահատելու վերաբերյալ, քանի որ շտկված

տեխնիկական բնութագրի պայմաններում այն չէր համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չտրկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.08.2020թ. (արձանագրության մեջ թյուրիմացաբար նշվել է 14.06.2020թ.) տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է կազմված, նշված չեն հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները: Հանձնաժողովը տեղեկացել է նաև, որ առաջարկված կենտրոնական վահանակը չունի առնվազն 3000 մետր հասցեական գծի երկարություն, իսկ լուսաձայնային ազդարարը հասցեական չէ: Նշված անհամապատասխանությունները շտկելու համար անհրաժեշտ է, որ ընկերությունը ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), որում պետք է նշվի հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.08.2020թ. (արձանագրության մեջ թյուրիմացաբար նշվել է 18.06. 2020թ.) տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել (ճանաչել) «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին:



Գնահատող հանձնաժողովը 14.08.2020թ. (արձանագրության մեջ թյուրիմացաբար նշվել է 14.06.2020թ.) տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրությամբ արդեն իսկ կիրառել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը և շտկում կատարելու հնարավորություն է տվել և «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին (այն է՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է կազմված, նշված չեն հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները: Հանձնաժողովը տեղեկացել է նաև, որ առաջարկված կենտրոնական վահանակը չունի առնվազն 3000 մետր հասցեական գծի երկարություն, իսկ լուսաձայնային ազդարարը հասցեական չէ: Նշված անհամապատասխանությունները շտկելու համար անհրաժեշտ է, որ ընկերությունը ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), որում պետք է նշվի հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը): Իսկ այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.08.2020թ. (արձանագրության մեջ թյուրիմացաբար նշվել է 18.06. 2020թ.) տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրությամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից է հայտարարել (ճանաչել) «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին:

Մինչդեռ ակնհայտ է, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում, Կարգի 41-րդ կետի հաձայն, առաջարկվող ապրանքը և դրա տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 42-րդ կետի ուժով՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր մերժման:

Այսպիսով, տվյալ պարագայում ցանկանում ենք նշել, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Ինչ վերաբերում է Կարգի 41-րդ կետին, ապա կրկին չի կարող կիրառվել Կարգի 41-րդ կետը և կրկին շտկում կատարելու հնարավորություն չի կարող տրամադրվել «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին:»:

«Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ն 29.09.2020թ.-ին ներկայացված մեկ այլ լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ. ներկայացրած թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/96 ծածկագրով բողոքը:

Վերը նշված բողոքի վերաբերյալ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է առարկություն, որին ի պատասխան ներկայացնում ենք հետևյալ լրացուցիչ փաստարկները.

Հրավերի մեջ նշված լուսաձայնային ազդարարի հետ կապված պահանջում հստակ նշված է, որ այն պետք է լինի հասցեական, իսկ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի առաջարկած «Астра-10 усн. 3» լուսաձայնային ազդարար ինքնին հանդիսանում է ոչ թե հասցեային, այլ անալոգային:

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի առաջարկած լուծումը տվյալ թերությունը շտկելու վերաբերյալ իրավաչափ չէ, քանի որ «Астра-БПА» հասցեային ռելեային մոդուլը չի դարձնում լուսաձայնային ազդարարը հասցեական, այլ ընդամենը հանդիսանում է ալտերնատիվ լուծում: Հասցեական լուսաձայնային ազդարարին վերաբերող գրեթե բոլոր պահանջներին բավարարում է ոչ թե հենց ազդարարը, այլ հասցեային ռելեային մոդուլը, որը չի համապատասխանում Ընթացակարգի պահանջներին (Ընթացակարգում շեշտած է հենց ազդարարի հասցեական լինելը, ոչ թե կոնկրետ խնդրի լուծում, որը հնարավոր կլիներ իրականացնել հասցեական ռելեային մոդուլի միջոցով):

Մեջբերում

Հասցեական լուսաձայնային ազդարար

Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ակազանգելու հրդեհի մասին: Ազդարարը պետք է լինի հասցեական- անալոգային և ունենա

- ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն
- հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ էլեկտրաէներգիայի և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն
- ընդունիչ հսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկառուցված ռելե
- ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ
- մեխանիկական փորձարկման մեթոդ
- հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները:
- ձայնային ազդանշանի ուժգնություն՝ առնվազն 80 դԲ:

Մինչդեռ՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն համոզմունք է հայտնում, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջներով նշված չէ, որ

յուրաքանչյուր հասցեական գծին պետք է հնարավորություն լինի միացնելու առնվազն 250 հասցեական սարք, այլ նշված է մեկ հասցեական գծի վրա առնվազն 250 հասցեային սարք միացնելու հնարավորություն: Սակայն նշված է, որ մեկ վահանակը պետք հնարավորություն ունենա միացնելու առնվազն 500 հասցեային սարք, իսկ առաջարկված «Acmpa-A PPA» լայնացուցիչը թույլ չի տալիս միացնել 500 հասցեային սարք, այլ 2 կապի գծին միասին վերցրած առավելագույնը 250 հասցեային սարք: Այսինքն 500 սարքի միացման համար անհրաժեշտ է լինելու փոփոխել 2 լայնացուցիչ: Հետևաբար «Acmpa-A PPA» լայնացուցիչը չի կարելի դիտարկել որպես Ընթացակարգի պահանջներին բավարարող վահանակ:

Կրկին անգամ ցանկանում ենք նշել, որ Ընթացակարգում նշված չէր կոնկրետ խնդիր կատարելու պահանջ (այն է տրամադրել սարքավորում կամ սարքավորումների խումբ, որը հնարավորություն կտա միացնելու առնվազն 500 հասցեային սարք, որն էլ առաջակել է «Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ն), այլ տրված էր հստակ պահանջ մեկ վահանակի հնարավորությունների մասով:

Մեջբերում

Վահանակը պետք է ունենա

- միացման առնվազն 2 կապի գիծ, յուրաքանչյուրը առնվազն 3000 մետր թույլատրելի երկարությամբ,

- առնվազն 1 հար RS485 կամ RS232 ինտերֆեյս,

- առնվազն 1 հար USB ինտերֆեյս,

- առնվազն 500 հար հասցեային սարք միացնելու հնարավորություն,

- մեկ հասցեական գծի վրա առնվազն 250 հասցեային սարք միացնելու հնարավորություն,

- հոսանքի սնուցումից անկախ հիշողություն՝ բոլոր իրադարձությունները գրանցելու համար,

- էկրան եւ սրեղնաշար,

- վերջին առնվազն 1000 հար պահվող իրադարձություն,

- համակարգի վերին մակարդակի կապը ապահովող ինտերֆեյսի գծի երկարությունը առնվազն 1000մ թույլատրելի երկարությամբ:

Հաջորդիվ՝ «Բալոյան եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշման մեջ ասվում է, որ իրենց կողմից ներկայացված համակարգը մոդուլային է և կենտրոնական ղեկավարման վահանակը «Acmpa-8945 PRO» և հասցեատեղան գծի ընդունիչ հսկիչ սարքը «Acmpa-A PPA» հանդիսանում են միմյանց լրացնող սարքեր և միացվում են վերին մակարդակի կապը ապահովող (RS485) գծի միջոցով, որի երկարությունը հասնում է մինչև

1000 մետր և հնարավորություն է տալիս հասցեական գիծը կարճեցնել 2000 մետրով, և այդպիսով միասին ապահովում են պահանջվող 3000 մ երկարությունը ամեն կապի գծի մասով,

Սակայն տվյալ սխեմայից երևում է, որ տվյալ պարագայում նույնպես մեկ կապի գծի երկարությունը չի ապահովում 3000մ պահանջվող ծավալը: Իսկ «Acmpa-A PPA»-ի քանակի ավելացումը առավել ևս չի երկարացնում մեկ կապի գծի թույլատրելի երկարությունը և չի ապահովում դրված պահանջը:

RS485 1-ին ուղղություն+ RS485 2-րդ ուղղություն+ RS485 3-րդ ուղղություն+ RS485 4-րդ ուղղություն  $\leq 1000$ մ

Վերը նշված սխեմայում ներկայացված է համակարգ, որտեղ օգտագործված է 4 «Acmpa-A PPA» լայնացուցիչ, ընդ որում «Acmpa-8945 PRO» կենտրոնական վահանակի անձնագրի 6-րդ էջում նշվում է, որ RS ինտերֆեյսի ընդհանուր մաքսիմալ երկարությունը 1000մ է, այսինքն տվյալ սխեմայից պարզ երևում է, որ «Acmpa-A PPA» լայնացուցիչը ղեկավարման վահանից 1000մ հեռավորության վրա տեղադրելու դեպքում այլևս լայնացուցիչ ավելացնել հնարավոր չի լինի, քանի որ բոլոր RS ուղղությունների հանրագումարը պետք է չգերազանցի 1000մ: Հետևաբար «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի պնդումը, որ համակարգը ապահովում և գերազանցում է հրավերում նշված 3000 մ կապի գծի մինիմալ երկարությունը, համարում ենք սխալ: Ընդ որում կրկնվելով նշենք, որ Ընթացակարգում չկա պահանջ ապահովել 3000 մետր երկարությամբ համակարգ, այլ հստակ նշված է, որ մեկ ղեկավարման վահանակը պետք է ունենա հնարավորություն միացնելու 2 կապի գիծ(ԱԼԸ), յուրաքանչյուրը 3000 մինիմալ թույլատրելի երկարությամբ: Մեջբերում՝ միացման առնվազն 2 կապի գիծ, յուրաքանչյուրը առնվազն 3000 մետր թույլատրելի երկարությամբ»:

Ելնելով վերը նշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ պարզ է դառնում, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում, Կարգի 41-րդ կետի հաձայն, առաջարկվող ապրանքը և դրա տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 42-րդ կետի ուժով՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր մերժման:»:

Ելնելով վերոգրյալից, «Սու Սիսթեմս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ծանաչելու մասին որոշումը,

- ընդունել «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշում:

### **3. ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 25.08.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սոս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 27.08.2020թ.-ի թիվ ԱՂ-998-2020 գրությամբ ներկայացրել է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անհրաժեշտ փաստաթղթերը և գրավոր դիրքորոշում, որի համաձայն՝

*«ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գտնում է, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ծանաչելու մասին իր որոշումը իրավաչափ է՝ հետևյալ հիմնավորմամբ.*

*Հանձնաժողովը արձանագրել է, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված հրդեհի հայտնաբերման համակարգի լուսաձայնային ազդարարը հասցեական չէ և առաջարկել է մեկ աշխատանքային օրում, ի թիվս այլ անհամապատասխանությունների, շտկել այդ անհամապատասխանությունը: «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), որի 1.7 կետում նշել է, որ լուսաձայնային ազդարարը հասցեական է և առաջարկել է հասցեային ռելեի մոդուլ (2 ռելե, 19 հատ - Астра-БПА) անվանումով լրացուցիչ սարքեր: Հավելված 1.1-ում նշված արտադրողի <https://vwww.tcko.biz/> կայք էջում «Астра-БПА» անվանումով սարքի վերաբերյալ տեղեկություններ չեն գտնվել, սակայն նույն կայքում առկա է «Астра-БРА» անվանումով սարքի վերաբերյալ տեղեկություններ, որը հասցեական ռելեի բայլ է և ունի լուսաձայնային ազդարարների աշխատանքը հասցեական դարձնելու հնարավորություն: Հանձնաժողովը չի բացառել, որ*

հնարավոր է մասնակիցը սարքի անվանման մեջ ուսերեն «P» տառի փոխարեն, անգլերենում նմանատիպ տառի արտասանության հետ պայմանավորված, սխալմամբ նշել է «N» տառը, ինչպես նաև այն, որ «Астра-БПА» անվանումով նմանատիպ սարք նույնպես կարող է գոյություն ունենալ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկա է հանդիսանում հրդեհի հայտնաբերման համակարգը, իսկ լուսաձայնային ազդարարները դրա բաղկացուցիչ սարքերից են և, ըստ մասնակցի ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, դրանք ապահովելու են հրավերով սահմանված հասցեական լինելու պահանջը՝ հանձնաժողովը «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները համարել է շտկված և «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից:»:

#### **4. Երրորդ անձ՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ներկայանալով հրավիրված նիստերին և ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար«կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին ներկայացրել է հայտ և համաձայն ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 7 արձանագրության պարզ է դարձել, որ արդյունքներով «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը նվազագույնն է, սակայն հանձնաժողովը արձանագրել է նաև այն, որ մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1-ում) առկա են թերություններ, որոնց շարքում նաև նշվել են լուսաձայնային ազդարարի հասցեական չլինելը և տազնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի կապի գծի առնվազն 3000մ թույլատրելի

երկարությամբ չապահովելը, ապա հանձնաժողովը կասեցրել է նիստը և «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին փոխել է մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունները շտկելու համար, որից հետո «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները, իսկ հանձնաժողովը համաձայն ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 8 արձանագրության «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները համարել է շտկված, հայտը գնահատել բավարար և «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել (ճանաչել):

«ՍՕՍ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ. ներկայացված բողոքը և բողոքի լրացման մի մասը՝ վերաբերվում է համապատասխանաբար լուսաձայնային ազդարարի հասցեական չիֆնելուն և բողոքի լրացումով՝ ներկայացված փազնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի կապի գծի առնվազն 3000մ թույլատրելի երկարությամբ չապահովելուն, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից արդեն իսկ արձանագրվել է որպես անհամապատասխանություն, ապա «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է և շտկված փարբերակը հանձնաժողովը գնահատել է բավարար:

Գտնում ենք, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները համապատասխանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներին:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պարզաբանությունն ավերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հերկյալ սկզբունքների վրա:

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝ տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված



տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չփոխում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում փոխյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ինչ վերաբերում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կարիքների համար «կրակմարիչների, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի» ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական պահանջին՝ «Հրդեհի հայտնաբերման համակարգը պետք է ապահովի 7800 մ2 տարածքի հրդեհային ահազանգումը, հրդեհային շլեյֆերի վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, փոխանցումը, ցուցադրումը և գրանցումը:», ապա «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Ռուսաստանի Դաշնությունում գործունեություն ծավալող «ՏԵԿՕ» ՓԲԸ-ի հրդեհի հայտնաբերման «Асmpa-A» հասցեական համակարգը ամբողջովին բավարարում է դրան(թե սարքերի առնվազն քանակների և թե սահմանված նվազագույն պահանջների մասով):

«ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն ուսումնասիրելով «ՍՕՍ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ-ի առարկությունները մեր կողմից ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1-ում) առկա անհամապատասխանությունների վերաբերյալ և վստահաբար հայտնում է, որ դրանք անհիմն են:

Ստորև ներկայացնում ենք «ՍՕՍ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ-ի 24. 08. 2020թ. ներկայացրած բողոքով և բողոքի լրացումով մատնանշված տեխնիկական բնութագրի առարկությունների անհիմն լինելը՝

1. Որպես հասցեական լուսաձայնային ազդարար «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն հավելված 1. 1-ի շրկված տարբերակով առաջարկել է «ՏԵԿՕ» ՓԲԸ-ի կողմից արտադրված «Асmpa-10 ucт.3» լուսաձայնային ազդարարը համալրված «Асmpa-БПА» հասցեական ռելեային մոդուլով: Առաջարկված հասցեական լուսաձայնային ազդարարը ամբողջովին բավարարում և գերազանցում է ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման

հարցման հրավերի պահանջներին (օրինակ՝ ձայնային ուժգնությունը 95 դեցիբել է հրավերում նշված մինիմալ 80 դեցիբելի փոխարեն)։

- Ղեկավարման կենտրոնական վահանակի («Acmpa-8945 PRO») համապատասխանելիություն,

- հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ («Acmpa-A PPA») էլեկտրատեղափոխի և ինֆորմացիայի երկկողմանի փոխանակման հնարավորություն (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

- ընդունիչ հսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկառուցված ռելե (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

- ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

- 24/7 ռեժիմով անընդհատ ավտոմատ կերպով փորձարկում է լուսաձայնային ազդարարի միակցման գիծը խափանումների ի հայտ բերելու նպատակով և խափանման դեպքում տալիս է համապատասխան ազդանշան կենտրոնական վահանակին (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

- նախատեսված են ստեղծներ լուսաձայնային ազդարարի մեխանիկական փորձարկման համար,

- ունի հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու է լուսաձայնային ազդարարի հասցեները (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

- ձայնային ազդանշանի ուժգնություն 95 դԲ:

2. ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջներով նշված չէ, որ յուրաքանչյուր հասցեական գծին պետք է հնարավորություն լինի միացնելու առնվազն 250 հասցեային սարք, այլ նշված է՝ մեկհասցեական գծի վրա առնվազն 250 հասցեային սարք միացնելու հնարավորություն:

3. Այն որ, մեր կողմից առաջարկված տազնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակը («Acmpa-8945 PRO», «Acmpa-A PPA» և «Acmpa-814 PRO» համադրությունը) «УОУ ШУСТУ» ՍՊԸ-ի պնդամաքշունի առնվազն միացման երկու հասցեական կապի գիծ յուրաքանչյուրը առնվազ 3000մ թույլատրելի երկարությամբ, ապա քանի որ մեր կողմից առաջարկված համակարգը մոդուլային է և կենտրոնական ղեկավարման վահանակը («Acmpa-8945 PRO», սարքի հասցեական գծի գումարային երկարությունը կարող է հասնել մինչև 16կմ, իսկ մեր առաջված ներկայիս տարբերակով կարող է ապահովել մինչև 6000մ հասցեական կապի գծի աշխատանքը) և հասցեական գծի ընդունիչ-հսկիչ սարքը («Acmpa-A PPA») հանդիսանում են միմյանց լրացնող սարքեր և

միակցվում են վերին մակարդակի կապը ապահովող (RS485) գծի միջոցով, որի երկարությունը հասնում է մինչև 1000մ և հնարավորություն է տալիս (եթե նախագիծը պահանջում է) հասցեական գիծը կարճեցնել մինչև 2000մ (տեղափոխելով հասցեական գծի ընդունիչ-հսկիչ սարքը ավելի կենտրոնացված վայր) , իսկ հասցեական գծի ընդունիչ-հսկիչ սարքի («Acmpa-A PPA») յուրաքանչյուր հասցեական գծի երկարությունը 1000մ է, ստացվում է, որ մեր կողմից առաջարկված համակարգը համապատասխանում է հրավերում նշված 3000մ երկարությամբ հասցեական գծին և գերազանցում է, քանի որ հասցեական գծի ընդունիչ-հսկիչ սարքը («Acmpa-A PPA») ունի երկու հասցեական հսկող գծի միացման հնարավորություն և յուրաքանչյուր ապահովվում է 1000մ հասցեական գծի երկարություն (2000մ+1000մ+1000մ=4000մ):1

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ «ՍՕՍ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ-ի բողոքը ենթակա է մերժման:»:

Ի պատասխան «ՍՕՍ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ-ի 29.09.2020թ.-ին ներկայացված բողոքի երկրորդ լրացման, Երրորդ անձը հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար տեխնիկական բնութագիրը պատվիրատուի կողմից սահմանված է և «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած 1-ին չափաբաժնի համար առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի(այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներին համապատասխան՝

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

Հաշվի առնելով, այն որ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկա է հանդիսանում հրդեհի հայտնաբերման համակարգը, իսկ լուսաձայնային ազդարարները, հասցեական գծի ընդունիչ-հսկիչ սարքերը, կենտրոնական ղեկավարման վահանակները, աղդասարքերը և այլն դրա բաղկացուցիչ սարքերից են՝ «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի առաջարկած հրդեհի հայտնաբերման համակարգը համապատասխանում է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հրավերով սահմանված պահանջներին, որը երևում է մեր կողմից ներկայացված Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով:

Ինչպես նաև կարևորում ենք այն հանգամանքը, որ «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն պայմանագիրը կնքելուց ներկայացնելու է որակավորման ապահովում պայմանագրի գնի 100%-ի (10051300 (տաս միլիոն հիսունմեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ) չափով և 10%-ի (1005130 (մեկ միլիոն հինգ հազար հարյուր երեսուն) ՀՀ դրամ) չափով պայմանագրի ապահովում, որոնք ներկայացվելու են Բանկային երաշխիքի ձևով և այս պարագայում «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի շահերից չի բխի հրավերի պահանջներին չբավարարող ապրանք մատակարարելը, ասենք ավելին «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված համակարգը ոչ միայն բավարարում է հրավերում նշված տեխնիկական բնութագրին, այլ նաև գերազանցում դրան, ինչը իր հերթին ապահովվելու է պատվիրատուի կողմից հրավերով մատնանշված առաջադրանքների լիարժեք կատարումը:

Իսկ ինչ վերաբերվում է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ տեղ զբաղեցրաց «ՍՕՍ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առարկություններին՝ գտնում ենք որ վերոնշյալ գնման առարկայի (հրդեհի հայտնաբերման համակարգ) պարագայում անընդունելի է համակարգի առանձին բաղկացուցիչ սարքերի տեխնիկական տվյալների նկատմամբ առարկությունները, քանի որ ևս մեկ անգամ նշենք, որ գնման առարկա է հանդիսանում ամբողջական համակարգ և ոչ թե համակարգում ներառված առանձին սարքերը:

Ինչպես նաև նորից Ձեզ ենք նեկայացնում մեր կողմից առաջարկված համակարգի տեխնիկական տվյալները «ՍՈՍ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲԲԱ-ԼՕ-2020/96 բողոքի /ԹԻՎ 2/ լրացման վերաբերյալ.

*Հասցեական լուսաձայնային ազդարար*

1. Ղեկավարման կենտրոնական վահանակի («Acmpa-8945 PRO») համապատասխանելիություն,

2. հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ («Acmpa-A PPA») էլեկտրատեղափոխի և ինֆորմացիայի երկկողմանի փոխանակման հնարավորություն (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

3. ընդունիչ հսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկառուցված ռելե (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

4. ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

5. 24/7 ռեժիմով անընդհատ ավտոմատ կերպով փորձարկում է լուսաձայնային ազդարարի միակցման գիծը խափանումների ի հայտ բերելու նպատակով և խափանման դեպքում տալիս է համապատասխան ազդանշան կենտրոնական վահանակին (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

6. նախատեսված են սրտեղներ լուսաձայնային ազդարարի մեխանիկական փորձարկման համար,

7. ունի հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու է լուսաձայնային ազդարարի հասցեները (ապահովվում է «Acmpa-БПА» -ի միջոցով),

8. ձայնային ազդանշանի ուժգնություն 95 դԲ:

Տազնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակ

Առաջարկված է Acmpa-8945 PRO», «Acmpa-A PPA» և «Acmpa-814 PRO» համադրությունը, որն ունի.

1. միացման առնվազն 16 հասցեական կապի, ընդհանուր առմամբ առնվազն 16000 մետր թույլարտելի երկարությամբ, («UOU ՄԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի անդրարձը հասցեական գծի երկարության վերաբերյալ),

2. 1 հար RS485,

3. 1 հար USB ինտերֆեյս,

4. 1750 հար հասցեային սարք միացնելու հնարավորություն, («UOU ՄԻՍՏԵՄՍ» ՍՊԸ – ի անդրարձը 500 ազդասարքի վերաբերյալ)

5. մեկ հասցեական գծի վրա առնվազն 250 հասցեային սարք միացնելու հնարավորություն,

6. հոսանքի սնուցումից անկախ հիշողություն՝ բոլոր իրադարձությունները գրանցելու համար,

7. էկրան եւ սպեղնաշար,

8. վերջին առնվազն 10000 հատ պահվող իրադարձություն,

9. համակարգի վերին մակարդակի կապը ապահովող ինտերֆեյսի գծի երկարությունը առնվազն 1000մ թույլատրելի երկարությամբ:

Մեր կողմից առաջարկված համակարգը ընդունելի է եղել գնահատող հանձնաժողովի համար՝ ինչը երևում է գնահատող հանձնաժողովի «ՍՕՍ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ դիրքորոշումի մեջ (որտեղ նույնպես նշված է, որ գնման առարկան հանդիսանում է ոչ թե հրդեհի հայտնաբերման համակարգում ներառված առանձին սարքերը, այլ համակարգը ամբողջությամբ):

Հարկ ենք համարում նշել նաև, որ եթե «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն առաջնորդվեր ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկա հանդիսացող հրդեհի հայտնաբերման համակարգի առանձին սարքերի տեխնիկական բնութագրերին, և ոչ թե ընդհանուր աշխատունակ համակարգի առաջարկությամբ, ապա ստիպված կլիներ առաջարկել նույն սարքավորումները ինչ որ առաջարկել 2-րդ և 3-րդ տեղը զբաղեցրած մասնակիցները, քանի որ շուկայում առկա հասցեական հրդեհի հայտնաբերման համակարգերից միայն «RUBEZH» ընկերության արտադրանքն է գրեթե (քանի որ РУБЕЖ-20П ПРОТ.Р3 հասցեական վահանակի երկու հասցեական գծերի ընդհանուր երկարությունն է 3000մ, այլ ոչ թե յուրաքանչյուր հասցեական գծինը առանձին,( մեջբերում РУБЕЖ-20П ПРОТ.Р3 սարքի տեխանձնագրից,

1.13 Длина АПС – не более 3000 м. Длина кабеля интерфейса RS485 - не более 1000 м), այսինքն եթե РУБЕЖ-20П ПРОТ.Р3 մեկ հասցեական գծի մուտքին միացվի 3000մ երկարությամբ հասցեական գիծ, ապա երկրորդ հասցեական գիծը կլինի ոչ աշխատունակ (սխեմա 2), և չի բավարարում հրավերում նշված տեխնիկական պայամանին՝ մեջբերում հրավերի տեխնիկական պահանջից,

Վահանակը պետք է ունենա միացման առնվազն 2 կապի գիծ, յուրաքանչյուրը առնվազն 3000 մետր թույլատրելի երկարությամբ):»

Ելնելով վերոգրյալից՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կրկին խնդրել են «Սոս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2019/96 բողոքը մերժել:

**5. ԳԲԲԱ-ԼՕ-2020/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի գնման առարկա է հանդիսանում հրդեհի հայտնաբերման համակարգը, որի հավելված 1-ի համաձայն, առաջադրվել է հետևյալ պայմանները՝

Հրդեհի հայտնաբերման համակարգը պետք է ապահովի 7800 մ<sup>2</sup> տարածքի հրդեհային ահազանգումը, հրդեհային շլեյֆերի վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, փոխանցումը, ցուցադրումը և գրանցումը:

Հրդեհի հայտնաբերման համակարգն իր մեջ պետք է ներառի առնվազն.\*

- Կառավարման ծրագրային ապահովում – 1 հատ
- Համակարգիչ և մոնիտոր 24" – 1 հատ
- Միացման տուփ մեծ – 2 հատ
- **Ղեկավարման և ընդարձակման վահանակ – 3 հատ**
- Պահուստային սնուցման սարք 5Ա – 3 հատ
- Մարտկոց 7Ա – 6 հատ
- Ինտերֆեյսի փոխակերպիչ – 1 հատ
- Ռելեային մոդուլ 4 ելքանի – 5 հատ
- Մուտքային մոդուլ 4 մուտքանի – 2 հատ
- Շլեյֆի մեկուսացման սարք – 13 հատ
- Ծխի տվիչ հասցեական – 364 հատ
- Ջերմային հասցեական տվիչ – 164 հատ
- Ձեռքի տվիչ հասցեական – 36 հատ
- **Լուսաձայնային ազդարար հասցեական – 37 հատ**
- Մալուխ չհրկիզվող / մետր 1\*2\*0.5 – 8000 մ
- Հոսանքի մալուխ 2\*0.75 – 100 մ
- FTP cat 5e տրոսով – 300 մ
- Մալուխատար 16x16 – 6000 մ
- Ճկախողովակ 20մմ – 500 մ
- Միացման տուփ փոքր IP65 – 3 հատ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Ահազանգման վահանակ (Առկա է՝ Վաճառողից չի պահանջվում)

• Ահազանգման վահանակը նախատեսված է հրդեհային և պահպանման տազնապները մոնիթորինգային կայանին (ԱԻՆ 911) կամ օգտագործողին հաղորդելու համար, որն իր մեջ ներառում է՝ 2 ծրագրավորվող ռելե, GSM գծով ավտոմատ կանչի սարքավորում՝ ԱԻՆ 911 մոնիթորինգային կայանի հետ Ademco Contact ID ֆորմատով տվյալների փոխանցման հնարավորությամբ:

**Տազնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակ**

Վահանակը նախատեսված է հրդեհային եւ անվտանգության ահազանգման հասցեական համակարգերի համար: Այն պետք է ունենա տեխնիկական կանոնակարգերի վկայական, որը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին:

**Վահանակը պետք է ունենա**

• միացման առնվազն 2 կապի գիծ, յուրաքանչյուրը առնվազն 3000 մետր թույլատրելի երկարությամբ,

- առնվազն 1 հատ RS485 կամ RS232 ինտերֆեյս,
- առնվազն 1 հատ USB ինտերֆեյս,
- առնվազն 500 հատ հասցեային սարք միացնելու հնարավորություն,
- մեկ հասցեական գծի վրա առնվազն 250 հասցեային սարք միացնելու հնարավորություն,
- հոսանքի սնուցումից անկախ հիշողություն՝ բոլոր իրադարձությունները գրանցելու համար,
- էկրան եւ ստեղնաշար,
- վերջին առնվազն 1000 հատ պահվող իրադարձություն,
- համակարգի վերին մակարդակի կապը ապահովող ինտերֆեյսի գծի երկարությունը առնվազն

1000մ թույլատրելի երկարությամբ:

Հասցեական ծխի տվիչ

Ծխի տվիչը օպտիկա- էլեկտրական տարրի միջոցով պետք է ապահովի հրդեհների հայտնաբերում ծխի արտանետման հետևանքով:

Տվիչը պետք է լինի հասցեական- անալոգային և ունենա

- հսկման տարածք՝ մինչև 3,5մ բարձրության վրա տեղադրելուց առնվազն 80մ<sup>2</sup>
- ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն
- հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի

և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն

- ծխի խտությունը չափելու հնարավորություն
- չափման արդյունքները մշակելու և «Հրդեհ» ազդանշանի ձեռնարկման հնարավորություն
- ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ
- մեխանիկական և օպտիկական փորձարկման մեթոդ
- առկայծող հոսքի ձգողականության զգայունություն ոչավելի, քան 0,20 դԲմ հնարավորություն
- հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները,
- առնվազն 10 մ /վ օդային հոսքի արագության դեպքում աշխատունակությունը պահպանելու

հնարավորություն:

Հասցեական ջերմային տվիչ

Տվիչի միացման ջերմաստիճանը պետք է կազմի առավելագույնը 54 -70 °C: Այն պետք է ջերմաչափող տարրի միջոցով անընդհատ չափի տարածքի ջերմաստիճանը և տվյալները հասցեական գծի միջոցով փոխանցի ընդունիչ –հսկիչ սարքին:

Տվիչը պետք է լինի հասցեական- անալոգային և ունենա

- հսկման տարածք՝ մինչև 3,5մ բարձրության վրա տեղադրելուց առնվազն 25մ<sup>2</sup>
- ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն
- հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի

և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն

- տարածքի ջերմաստիճանը չափելու հնարավորություն
- չափման արդյունքները մշակելու և «Հրդեհ» ազդանշանի ձեռնարկման հնարավորություն
- ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ
- մեխանիկական և օպտիկական փորձարկման մեթոդ
- հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները:

Հասցեական ձեռքի տվիչ

Տվիչի նախատեսված է համակարգը ձեռքով գործարկելու համար: Տվիչը պետք է լինի հասցեական- անալոգային և ունենա

- ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն
- հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի

և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն

- կոճակի սեղմման, ապակու կտորման կամ այլ եղանակով, մարդու օգնությամբ «Հրդեհ» ազդանշանի ձեռնարկման հնարավորություն
- ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ
- մեխանիկական փորձարկման մեթոդ
- հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները:

**Հասցեական լուսաձայնային ազդարար**

Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ահազանգելու հրդեհի մասին:

**Ազդարարը պետք է լինի հասցեական-անալոգային և ունենա**

- ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն
  - հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ էլեկտրաէներգիայի
- և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն
- ընդունիչ հսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկառուցված ռելե
  - ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ
  - մեխանիկական փորձարկման մեթոդ
  - հասցե, որը ցույց կտա հասցեական գծի ու տվիչի հասցեները



- ձայնային ազդանշանի ուժգնություն՝ առնվազն 80 դԲ
- Չիրկիզվող մալուխ 0.5 մմ<sup>2</sup> հաստությամբ
- Մալուխը պետք է նախատեսված լինի հատուկ հրդեհային համակարգում օգտագործելու համար, բաղկացած լինի առնվազն 2 լարից և լինի «Витая пара» տիպի:
- Օպերատորի ավտոմատացված աշխատատեղ
- Օպերատորի ավտոմատացված աշխատատեղը իրենից ներկայացնում է համակարգիչ, որն ունի ծրագրային ապահովում՝ հրդեհային ահազանգման համակարգի ղեկավարման և վերահսկման համար: Ավտոմատացված աշխատատեղում պետք է տեղադրել նաև
  - ԱԻՆ հետ կապ հաստատող սարքը,
  - Համակարգից ԱԻՆ հետ կապ հաստատող սարքին ազդանշան փոխանցող սարքը (մոդուլը)
  - մեկ լուսաձայնային ազդարար, որը պետք է ավտոմատ ինքնագործարկվի համակարգում առկա ցանկացած սցենարով
  - համակարգի գլխավոր ղեկավարման հանգույցը (սարքը), որի միջոցով օպերատորը հնարավորություն կունենա առանց համակարգչի հեռակա կապ հաստատել շենքի ցանկացած հանգույցի հետ և կկարողանա կատարել ցանկացած գործողություն՝ հանգույցի տեխնիկական հնարավորություններին համապատասխան:
    - Շենքերից մեկում գործում է արդեն տեղադրված հրդեհային հասցեային ինքնաշխատ համակարգ «BOLID» ընկերության արտադրանքի: Պահանջվում է դրա ղեկավարումը ևս տեղափոխել ընդհանուր ավտոմատացված աշխատատեղ՝ բոլոր համակարգերը մեկ վայրից ղեկավարելու համար:
      - Ծրագրային ապահովում՝
        - Հրդեհի դեպքում օպերատորի համար մոնիտորի վրա պետք է հստակ երևա հրդեհի վայրը (հարկը, տարածքը և կետը),
        - օպերատորը պետք է տեսնի տվիչի տեսակը (ջերմային, ծխի կամ ձեռքի),
        - օպերատորը պետք է տեսնի համակարգի խափանումը կամ համակարգի մասնակի խափանումը (տվիչներ, լարեր, սնուցման աղբյուրներ, լուսաձայնային ազդարարներ և այլն),
        - ցանկացած պահի պետք է հնարավորություն լինի մոնիտորի վրա տեսնելու համակարգի ցանկացած բաղադրիչի ներկայիս վիճակը,
        - ծրագիրը պետք է ունենա վերջին առնվազն 3 ամսվա իրադարձությունների մատյան,
        - օպերատորը պետք է հնարավորություն ունենա ցանկացած պահի համակարգչի միջոցով միացնելու ցանկացած լուսաձայնային ազդարար,
      - Համակարգի ընդհանուր բացատրությունը և պահանջները
        - Համակարգում պետք է ներառվի սնուցման սարքեր 24+1 աշխատանքային ռեժիմով աշխատող,
        - Մոնտաժումը պետք է կատարվի հրդեհային չայրվող մալուխներով
        - մալուխները անցկացնել սարքից սարք, ամբողջական, առանց լրացուցիչ միացումների, բոլոր միացումները պետք է կատարվեն սարքերի պտուտակների կամ միացման այլ դետալների միջոցով,
        - մալուխների մոնտաժումը իրականացնել համապատասխան մալուխատարերով (լինեն քողարկված), որոնք պետք է պտուտակներով ամրացվեն պատերին և առաստաղին,
        - շենքերի կապը ապահովել դրսի համար նախատեսված արևապաշտպան, ցրտակայուն և ջրակայուն մալուխով
        - շենքերի կապն ապահովելուց՝ լրացուցիչ միացման կարիքի դեպքում, դրանք կատարել հատուկ միացման դետալներով և հերմետիկ միացման տուփերի միջոցով,
        - միացման տուփերն ընտրել առնվազն IP65 պաշտպանվածության աստիճանով,
        - բոլոր սարքավորումները պետք է աշխատեն որպես մեկ ընդհանուր համակարգ
        - Համակարգի աշխատանքը պետք է ապահովված լինի մոնիտորինգային համակարգով, որը հնարավորություն կտա օպերատորին 24/7 ռեժիմով վերահսկել համակարգի անխափան աշխատանքը:
          - ընդունիչ- հսկիչ և պահուստային սնուցման սարքերը հարկերում քողարկել տուփերում:
          - նախատեսել 2 հատ առնվազն երկու մուտքանի մուտքային մոդուլ՝ հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի հետ ինտեգրելու համար, որոնցից օպերատորը պետք է ընդհանուր մոնիթորինգի համակարգի վրա ստանա աշխատունակության և գործարկվելու մասին ինֆորմացիաները, բայց չունենա հնարավորություն՝ ազդելու դրանց վրա:
            - համակարգի մոնտաժումը և գործարկումը պետք է իրականացնի մատակարարը,
            - կատարողական գծագրերի տրամադրում աշխատանքների ավարտին:
            - Աշխատանքների ավարտից հետո մատակարարը պետք է ապահովի սենյակների մաքրությունը՝ բերելով նախկին տեսքի:
    - Երաշխիքային ժամկետը՝ համակարգը ընդունելու օրվանից առնվազն 1 տարի:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.08.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է կազմված, նշված չեն հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները: Հանձնաժողովը տեղեկացել է նաև, որ առաջարկված կենտրոնական վահանակը չունի առնվազն 3000 մետր հասցեական գծի երկարություն, իսկ լուսաձայնային ազդարարը հասցեական չէ: Նշված անհամապատասխանությունները շտկելու համար անհրաժեշտ է, որ ընկերությունը ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), որում պետք է նշվի հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես՝ համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

iv. Հանձնաժողովի 18.08.2020թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և որոշել է վերջինիս Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված (հաղթող) մասնակից:

v. 19.08.2020թ.-ին [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

vi. «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում նշվել է հետևյալը՝

Ծրագրային ապահովվում-նախատեսված է համակարգի կարգաբերման և մոնիթորինգի համար, ապահովվում է տիչեերի և համակարգի մյուս տարրերի վիճակի ցուցադրում հատակագծի վրա օնլայն ռեժիմով:

Կենտրոնական վահանակ՝

1. Ընդհանուր առմամբ մինչև 2000 հասցեական տվիչներ կարգավիճակի մոնիտորինգ,

2. 10000 իրադարձությունների գրանցում գրանցամատյանում (համակարգչային մոնիտորինգի համար տվյալների բազայում արխիվային կարողությունը անսահմանափակ է),

3. տեղեկատվության փոխանակում Astra Pro համակարգի մոնիտորինգի ծրագրային փաթեթի հետ USB լարի միջոցով,

4. ներկառուցված RS-485 տեղեկատվական միջերես՝ լրացուցիչ սարքավորումներ միացնելու համար

5. լարային ազդանշանային համակարգի կառավայտում

6. և այլն

Ղեկավարման վահանակ՝

1. PIN ծածկագրերի մուտքագրում և փոխանցում Pro շարքի կառավարման վահանակին (Astra-8945Pro, Astra-812 Pro) թույլտվության և ուղղակի հսկողության համար,

2. Կառավարման վահանակից ստացվող ծանուցումների ցուցադրում LCD էկրանի վրա, ներկառուցված ձայնային ազդանշան և ընդհանրացված ազդանշանների ցուցիչներ,

3. ռելեների կառավարում

4. կենտրոնական կառավարման վահանակի արխիվում պահվող իրադարձությունների ցուցադրում, պաշտպանություն չթույլատրված մուտքից

5. պատից տարանջատման հսկողություն

6. USB ինտերֆեյս համակարգչի հետ կապի համար

7. և այլն

Ինդիկայիայի վահանակ՝

1. համակարգի ընդհանրացված վիճակի ցուցադրում 8 LED ցուցիչների վրա

2. զոնաների վիճակի ցուցադրում LED լուսադիոդային ցուցիչներով

3. տեղեկատվության փոխանակում կառավարման վահանակի հետ լարային RS-485 ինտերֆեյսի միջոցով

4. ծանուցումների երեք գույնանի ցուցադրում

5. համակարգի հատվածների կապը ցուցիչների հետ ծրագրավորումը կատարվում է ПКМ Астра Pro версии 5.1 մոնիտորինգի ծրագրային փաթեթի միջոցով

6. և այն

Պահեստային սնուցման աղբյուր՝

1. էլեկտրոններգիայի գնահատված լարում 12 վոլտ

2. մարտկոցը լիցքավորվում է էլեկտրոններգիայի աղբյուրից

3. մարտկոցային էլեկտրամատակարարում էլեկտրոններգիայի ձախողման դեպքում

4. գերբեռնվածության և ելքային կարճ միացման պաշտպանություն

5. մարտկոցի պաշտպանություն խորը լիցքաթափումից

6. տրանսֆորմատորի պաշտպանություն ինտեգրված ջերմային ապահովիչով

Ռելեային մոդուլ՝

1. տեղեկատվության փոխանակում կառավարման վահանակի հետ լարային RS-485 ինտերֆեյսի միջոցով

2. 4 ղեկավարման գիծ, որոնցից երկուսը գծի վնասման վերահսկումով

Մուտքային մոդուլ՝

1. աշխատում է հասցեական կապի գծում

2. բաց և կարճ միացման համար հրդեհային ազդանշանային հանգույցի սպասարկման դիտանցում

3. երկու լարային բաժինների միացում

Շլեֆի մեկուսացման սարք-համակարգի հասցեական հաղորդակցման գծի կտրման և կարճ միացման վերահսկում և վնասված հատվածի իզոլացում

Ծխի թվիչ հասցեական՝

1. միկրոպրոցեսորային ազդանշանի վերլուծություն

2. պատենտավորված ծխային խուցի դիզայն

3. տարածքի ջերմաստիճանի չափում

4. երկգույնանի ծխի հայտնաբերման մեթոդ, կեղծ ահազանգումներից խուսափելու համար

5. օնլայն ռեժիմով ծխային խուցի փոշոտվածության վերահսկում

6. մինչև 110մք տարածքի վերահսկում (3.5մ բարձրություն)

7 և այն

Ջերմային տվիչ հասցեական՝

1. միկրոպրոցեսորային ազդանշանի վերլուծություն
2. տարածքի ջերմաստիճանի չափում
3. մինչև 25 մք տարածքի վերահսկում (3.5մ բարձրություն)
4. և այլն

Ձեռքի տվիչ հասցեական՝

1. միկրոպրոցեսորային ազդանշանի վերլուծություն
2. ձեռքով հրդեհային ազդանշանի ակտիվացնում՝ ձեռքով սեղմելով սկավառակի տարը, առաջացնել ազդանշանային ծանուցում փոխանցելով կենտրոնական վահանակին Ազդարարիչ լուսաձայնային՝

1. ձայնային ճնշման մակարդակ, ոչ պակաս քան 95 դեցիբել

2. արտաքին լուսավորության ֆոնի վրա թեթև ազդանշանների հակադրությունների ընկալում մինչև 500 լյուքս

Մալուխ հակահրդեհային հասցեական գծի-առնվազն 180 րոպե դիմացկունություն կրակին:

vii. «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից որպես գնահատող հանձնաժողովի կողից արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացվել է թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում նշելով հետևյալը՝

Ղեկավարման և ընդարձակման վահանակ-3 հատ:

Վահանակը նախատեսված է հրդեհային և անվտանգության ահազանգման հասցեական համակարգերի համար: Այն ունի տեխնիկական կանոնակարգերի վկայական, որը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին: Ունի միացման 2 կապի գիծ, յուրաքանչյուրը 3000 մետր թույլատրելի երկարությամբ (հաստատված է արտադրողի կողմից):

Լուսաձայնային ազդարար (հասցեական):

Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ահազանգելու հրդեհի մասին: Ազդարարը հասցեական է և ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները...:

## **6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ... կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտով ապրանքների գնման դեպքում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը: Հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթերի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր մասնակցի հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարված «ՀԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի գնման



առարկա է հանդիսանում հրդեհի հայտնաբերման համակարգը, որի հավելված 1-ի համաձայն, առաջադրվել է հետևյալ պայմանները՝

Ղեկավարման և ընդարձակման վահանակ-3 հատ:

Տազնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակ:

Վահանակը նախատեսված է հրդեհային եւ անվտանգության ահազանգման հասցեական համակարգերի համար: Այն պետք է ունենա տեխնիկական կանոնակարգերի վկայական, որը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին: Վահանակը պետք է ունենա միացման առնվազն 2 կապի գիծ, յուրաքանչյուրը առնվազն 3000 մետր թույլատրելի երկարությամբ:

Հասցեական լուսաձայնային ազդարար:

Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ահազանգելու հրդեհի մասին: Ազդարարը պետք է լինի հասցեական-անալոգային:

Հանձնաժողովի 14.08.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է կազմված, նշված չեն հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները: Հանձնաժողովը տեղեկացել է նաև, որ առաջարկված կենտրոնական վահանակը չունի առնվազն 3000 մետր հասցեական գծի երկարություն, իսկ լուսաձայնային ազդարարը հասցեական չէ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, կիրառելով Կարգի 41-րդ պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից որպես գնահատող հանձնաժողովի կողից արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացվել է թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում նշելով հետևյալը՝

Ղեկավարման և ընդարձակման վահանակ-3 հատ:

Վահանակը նախատեսված է հրդեհային և անվտանգության ահազանգման հասցեական համակարգերի համար: Այն ունի տեխնիկական կանոնակարգերի վկայական, որը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին: Ունի միացման 2 կապի գիծ, յուրաքանչյուրը 3000 մետր թույլատրելի երկարությամբ (հաստատված է արտադրողի կողմից):

Լուսաձայնային ազդարար (հասցեական):

Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ահազանգելու հրդեհի մասին: Ազդարարը հասցեական է և ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները...:

Հանձնաժողովի 18.08.2020թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից:

Ուսումնասիրելով «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից, որպես գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկում, ներկայացված թիվ 1.1 հավելվածով ներկայացված մատակարարվելիք ապրանքի տեխնիկական բնութագիրը, համադրելով այն Հրավերի թիվ 1 հավելվածում առկա տեխնիկական բնութագրին, ինչպես նաև հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից 14.08.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով նախատեսված և Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված ապրանքի բնութագրերի միջև անհամապատասխանություններ առկա չեն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից պահպանվել են Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմանները, այն որ՝ Մասնակցի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված ժամանակահատվածում շտկվել են 14.08.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքի քննության ընթացքում ներկայացված Ընթացակարգի տեխնիկական բնութագրում և Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում ոչ ակնառու անհամապատասխանությունների մասին բողոքով

ներկայացված փաստերին և վերլուծությանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ

դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի չհամապատասխանելու հավաստող վերաբերելի և թույլատրելի ապացույց, որով հնարավոր կլիներ հերքել և բացառել Երրորդ անձի կողմից ներկայացված փաստական հանգամանքները: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Բողոքաբերն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարված «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկան հանդիսանում է մեկը, այն է՝ հրդեհի հայտնաբերման համակարգը: Երրորդ անձն իր կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի՝ Հավելված 1.1-ի 1.3-րդ կետով ապրանքային նշան և արտադրող նշել է «ТЕКО», իսկ մակնիշ՝ «Астра-А РПА», որն ունի միացման 2 կապի գիծ, յուրաքանչյուրը 3000 մետր թույլատրելի երկարությամբ: Ուսումնասիրելով առաջարկվող «Астра-А РПА» մակնիշի ապրանքատեսակի տեխնիկական անձնագիրը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ դրանում առկա 1.4-րդ կետը վերաբերում է 250 հասցեային սարք միացնելու հնարավորությանը, որի երկարությունը չի կարող գերազանցել 1000 մետրը: Այլ կերպ ասած՝ Երրորդ անձի կողմից ներկայացված Հավելված 1.1-ի 1.3-րդ կետում նշված «յուրաքանչյուրը 3000 մետր թույլատրելի երկարությամբ» տեխնիկական բնութագիրը վերաբերում է միացման 2 կապի գծի երկարությանը, այլ ոչ թե՝ 250 հասցեային սարք միացնելու հնարավորությանը և դրանց երկարությանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է թիվ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով ընթացակարգի Հրավերի

պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին, իսկ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին որոշումը կայացվել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ինչի արդյունքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը, որպիսի պայմաններում, «Սու Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

«Սու Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/96 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



**ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**